ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-20/1-1

ք. Երևան «30» դեկտեմբեր 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ.Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տարածքային ցանցի հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 720 000 000 (յոթ հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով հաստատված վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Քանի որ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի

կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	ՀՀ ք.Երևան, Տերյան 19, բն.4
Կառավարական տուն 1	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1570043102134100
Հ/Հ	ՀՎՀՀ 00024873
ՀՎՀՀ 02505554	Գլխավոր տնօրեն
	Հ.Եսայան
/ստորագրություն/	/ստորագրություն/ Կ.Տ/
Կ.Տ.	

Հավելված N 1
« 30 » դեկտեմբեր 2019թ. կնքված
ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-20/1-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

		Ծառայության						
							Մատուցման	
հրավե-րով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկա-գիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը 24 ամսվա համար	ընդհանուր գինը 24 ամսվա համար	ընդհանուր քանակը	Հասցեն	ժամկետը
1	72721100/507	**Տարածքային ցանցի հետ կապված ծառայություններ՝** Հայաստանի Հանրապետության 1415 ուսումնական հաստատությունների համար, համաձայն ստորև ներկայացված հավելվածների	դրամ	720 000 000	720 000 000	1	Ստորև ներկայացված հավելված 2-ում նշված հասցեներում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու հաջորդ աշխատանքային օրվանից հաշված 24 ամիս

*** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Հավելված 1
Տեխնիկական բնութագրի

Տարածքային ցանցի հետ կապված ծառայությունների նկարագիր

1. Տեղեկատվական ցանցի կապի ապահովման ծառայություններ

Աղյուսակ 1

N	Անվանում	Նկարագրությունը
1.	Առանձնացված կապուղի	Առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում կապի ծառայությունների մատակարար ընկերության (այսուհետ՝ ԿԾՄ) 2 տարբեր հանգույցներից դեպի կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, ք. Երևան, Բուրնազյան 37 (այսուհետ՝ կենտրոնական հանգույց)
		Առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում կենտրոնական հանգույցի և հավելված 2-ի աղյուսակ 1, 2 կետերի միջև
		Առանձնացված մեկ այլ կապուղու ապահովում (բացառությամբ «GSM(WCDMA,CDMA,LTE)» տեխնոլոգիայի) կենտրոնական հանգույցի և հավելված 2-ի աղյուսակ 3-ի կետերի միջև
		Պահուստային «GSM(WCDMA,CDMA,LTE)» կապի ապահովում կենտրոնական հանգույցի և հավելված 2-ի աղյուսակ 1, 2 և 3 –ի կետերի միջև

2.	Պայմաններ	• Ապահովել կենտրոնական հանգույցում 3gb/s՝ օգտագործելով SFP+ տեխնոլոգիան, հավելված 2-ի NN 1 և 2 աղյուսակների յուրաքանչյուր կետում առնվազն 20mb/s երաշխավորված, երկկողմանի(սիմետրիկ) տվյալների փոխանցման հնարավորություն: • «latency» առավելագույնը 10 ms
		• Ապահովել հավելված 2-ի աղյուսակ 3-ի յուրաքանչյուր կետում առնվազն 8mb/s թողունակությամբ երաշխավորված, երկկողմանի(սիմետրիկ) տվյալների փոխանցման հնարավորություն: • «latency» - 90% կետերում առավելագույնը 45 ms և 10% կետերում առավելագույնը 80 ms
		• Պահուստային կապ - ապահովել հավելված 2-ի NN 1, 2 և 3 աղյուսակների յուրաքանչյուր կետում առնվազն 512Kb/s թողունակությամբ տվյալների փոխանցման հնարավորություն: • «latency» առավելագույնը 120 ms
		• Անհրաժեշտ սարքավորումների տեղադրում, կարգաբերում և սպասարկում • տեխնիկապես ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) բաժանումը տարբեր «Layer2» ենթացանցերի • տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների «Layer2» ենթացանցերի • ապահովել համակցում վերոնշյալ «Layer2» խմբերի միջև • ապահովել ցանկացած «Layer2» պրոտոկոլների թափանցելիություն ցանկացած կետում • կապուղիների պատկերավոր նկարագրություն
3.	Որակի պահանջներ	Մեկ տարվա ընթացքում՝ • հավելված 2 –ի NN 1 և 2 աղյուսակների որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 12-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամանակով; • հավելված 2-ի N 3 աղյուսակի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 30-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամանակով
		Մեկ ամսվա ընթացքում հավելված 2 –ի NN 1 և 2 աղյուսակների որևէ կետում կապի խափանումների(բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 120 րոպեն, իսկ հավելված 2-ի N 3 աղյուսակի որևէ կետում՝ 240 րոպեն: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար:
4.	Այլ պահանջներ	Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում
		Կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի «online» վերահսկման հնարավորություն

2. «Ինտերնետ» կապի ապահովման ծառայություններ

Աղյուսակ 2

N	Անվանում	Նկարագրությունը
1.	Ինտերնետ կապ	Երաշխավորված, երկկողմանի(սիմետրիկ) ինտերնետ հասանելիության ապահովում օպտիկամանրաթելային կապուղով 2 իրարից անկախ ԿԾՄ-ներից** (ԿԾՄ-1, ԿԾՄ-2) դեպի կենտրոնական հանգույց
2.	Պայմաններ	• Հիմնական ինտերնետ (ԿԾՄ-1) - առնվազն 1gb/s թողունակությամբ և միաժամանակ առնվազն 500 mb/s թողունակությամբ ՀՀ տարածքում

		• Պահուստային ինտերնետ (ԿԾՄ-2) - առնվազն 200mb/s թողունակությամբ և միաժամանակ առնվազն 100 mb/s թողունակությամբ ՀՀ տարածքում
		«Dynamic routing» ԿԾՄ-ների և կենտրոնական հանգույցի միջև
		Անհրաժեշտ սարքավորումների տեղադրում, կարգաբերում և սպասարկում
4.	Որակի պահանջներ	Մեկ տարվա ընթացքում կենտրոնական հանգույցում ինտերնետ հասանելիության խափանումների(բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 6-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում Ինտերնետ հասանելիության բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով:
		Մեկ ամսվա ընթացքում ինտերնետ հասանելիության խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 90 րոպեն: Սույն դրույթի իմաստով Ինտերնետ հասանելիության խափանումների (բացակայությունների) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում Ինտերնետ հասանելիության բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար:
5.	Այլ պահանջներ	Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում
		Ինտերնետ հասանելիության որակի և օգտագործվող ծավալի «online» վերահսկման հնարավորություն
		«/28 IP» հասցեների տրամադրում
		Ինտերնետ կապի ապահովումը պետք է համապատասխանի ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 1069 - Ն որոշման պահանջներին:

***Տրամադրվող կապուղին ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս պետք է լինի ֆիզիկապես առանձին:*

Հավելված 2
Տեխնիկական բնութագրի

1. Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների ցանկ

Աղյուսակ 1

Հ/հ	Ուսումնական հաստատություն	Հասցե
1.	Ա.Երզնկյանի անվ. թիվ 118 ա/դ	Արզումանյան 8
2.	Ա.Հովհաննիսյանի անվ. թիվ 194 հմ/դ	Նոր-Արեշ 7 փ. 1
3.	Ա.Մանուկյանի անվ. թիվ 93 մ/դ	Դավիթաշեն 5-րդ փող.
4.	Մ. Սեբաստացի կրթահամալիրի հիմնական դպրոց	Ծովակալ Իսակովի 52/6
5.	Ա.Շավարշյանի անվ. թիվ 40 հմ/դ	Վարդանանց 30
6.	Ա.Պուշկինի անվ. թիվ 8 հմ/դ	Մոսկովյան 17
7.	Աթարբեկյանի անվ. թիվ 61 մ/դ	Հովսեփյան 91
8.	Ալ. Մյասնիկյանի անվ. թիվ 66 հմ/դ	Բագրատունյաց 9
9.	Ալ.Բլոկի անվ. թիվ 122 հմ/դ	Արզումանյան 5
10.	Ալ.Շիրվանզադեի անվ. թիվ 21 մ/դ	Վ. Վաղարշյան 24
11.	Ավ.Իսահակյանի անվ. թիվ 16 ա/դ	Բուռնազյան 37
12.	Արհեստագործական ավագ դպրոց	Անդրանիկի 92/1
13.	Բ-1 թաղ-ի հանրակրթական դպրոց	Ա. Բաբաջանյան 47/1
14.	Բ-4 թաղ-ի հանրակրթական դպրոց	Ա. Բաբաջանյան 38/1
15.	Գ. Գյուլբեկյանի անվ. թիվ 190 ա/դ	Հ/Ա Բ - 2 թաղ.
16.	Գ. Նժդեհի անվ. թիվ 161 հմ/դ	Բագրատունյաց 32/1
17.	Գ.Բաղյանի անվ. թիվ 141 հմ/դ	Ն/Ն Գյուլիքևիսյան-27
18.	Գ.Էմինի անվ. թիվ 182 ա/դ	Կրիվոյի 55
19.	Գ.Մահարու անվ. թիվ 176 հմ/դ	Հովնաթանի 33

20.	Գ.Մարգարյանի անվ. թիվ 94 ա/դ	Բաշինջաղյան 100
21.	Գ.Նարեկացու անվ. թիվ 137 հմ/դ	Ս. Տարոնցի 17
22.	Գ.Ստեփանյանի անվ. թիվ 135 հմ/դ	Ն/Ն2-րդ զ.Սեփանյան 5
23.	Գեղարվեստի վարժարան	Ռաֆֆու 69/1
24.	Գրիբոյեդովի անվ. թիվ 41 հմ/դ	Մյասնիկյան 2
25.	Դ.Հովսեփյանի անվ. թիվ 191 հմ/դ	Անդրանիկի 73
26.	Է.Բոյաջյանի անվ. թիվ 121 հմ/դ	Պ. Տիչինայի նրբ.
27.	Թելմանի անվ. թիվ 13 հմ/դ	Արշակունյաց 20
28.	թիվ 101 մ/դ	Մուշական
29.	թիվ 105 ա/դ	Օտյան 45
30.	թիվ 107 մ/դ	Ջրաշենի 1 փ., 41շ.
31.	թիվ 108 մ/դ	Սիլիկյան թաղամաս 10
32.	թիվ 109 ա/դ	Մարգարյան 2 նրբ. 14
33.	թիվ 110 հմ/դ	Ս. Տարոնցի 11
34.	թիվ 111 մ/դ	Լուկաշինի 1\5
35.	թիվ 12 հտ/դ	Սիմոն Վրացյան 75
36.	թիվ 120 հմ/դ	Մ. Խորենացի 207
37.	թիվ 13 երաժշտական մ/դ	Ծովակալ Իսակովի 13
38.	թիվ 134 հմ/դ	Նանսենի 14փ
39.	թիվ 136 հմ/դ	Լեփսիուսի 6 փ.
40.	թիվ 140 հմ/դ	Նորագավիթ 1-ին փող. 99
41.	թիվ 144 հմ/դ	Վերին Շենգավիթ 2-րդ փող. 9
42.	թիվ 147 հմ/դ	Կ.Ուլնեցու 1
43.	թիվ 152 հմ/դ	Արարատյան 1 զանգված
44.	թիվ 153 հմ/դ	Առաքելյան 47
45.	թիվ 157 մ/դ	Նորք-Մարաշ 11փողոց 62
46.	թիվ 159 ա/դ	Նորք-Նորք 5-րդ Մ/Շ
47.	թիվ 160 հմ/դ	Ավանեսովի 10
48.	թիվ 162 հմ/դ	Անդրանիկի-4
49.	թիվ 167 հմ/դ	Սարի-թաղ 28 փ. 1
50.	թիվ 168 հմ/դ	Բաշինջաղյան 1 նրբ
51.	թիվ 170 ա/դ	Ավան Թումանյան 3
52.	թիվ 171 հմ/դ	Իսահակյան թաղ.
53.	թիվ 174 հմ/դ	Սվաճյան - 42
54.	թիվ 175 մ/դ	Նուբարաշեն 11 փող.
55.	թիվ 178 հմ/դ	Խաղաղ-Դոնի 25
56.	թիվ 179 հմ/դ	Օհանովի փող.
57.	թիվ 180 հմ/դ	Ավան-Առինջ
58.	թիվ 181 հմ/դ	Բաբաջանյան փողոց 4
59.	թիվ 185 հմ/դ	Բեկնազարյան 5
60.	թիվ 186 հմ/դ	Ն/Ն 8-րդ զ.
61.	թիվ 188 հմ/դ	Համո Բեկնազարյան 5
62.	թիվ 195 ա/դ	Մազմանյան 5ա
63.	Ա. Նավասարդյանի անվ. թիվ 196 հմ/դ	Դավթաշեն 4-րդ թաղամաս
64.	թիվ 197 հմ/դ	Ն/Ն 9-րդ մ/շ Վիլնյուսի փ.
65.	Հ. Խաչատրյանի անվ. թիվ 199 հմ/դ	Դավթաշեն 4-րդ թաղ.
66.	մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հտ/դ	Նորքի այգիներ 247

67.	թիվ 2 հտ/կթհ	Ռաֆֆու 113
68.	թիվ 2 ա/դ	Տիգրան Մեծի 34
69.	թիվ 200 հմ/դ	Տ. Պետրոսյան
70.	թիվ 22 հմ/դ	Գ-3 թաղամաս
71.	Ա. Մարգարյանի անվ. թիվ 29 ա/դ	Սարյան 23
72.	թիվ 31 հմ/դ	Հ. Հովսեփյան 2
73.	Մ. Նալբանդյանի անվ. թիվ 33 հմ/դ	Նար-Դոսի փող. 38
74.	թիվ 37 հմ/դ	Քանաքեռ ՀԷԿ 14
75.	թիվ 39 հմ/դ	Ծխախոտագործների - 1
76.	թիվ 44 հմ/դ	Մ. Ավետիսյանի 89
77.	թիվ 46 ա/դ	Մանանդյան 2
78.	թիվ 49 հմ/դ	Նոր-Արեշ 5 - րդ փող.2
79.	թիվ 50 հմ/դ	Շևչենկո 34
80.	Մ. Քաջունու անվ. թիվ 54 ա/դ	Ն. Տիգրան - 12
81.	թիվ 64 հմ/դ	Վարդաշեն 3-րդ փ. 2 շենք
82.	թիվ 75 հմ/դ	Ներքին Շենգավիթ 12-րդ փող. 13
83.	Մովսես Պողոս Ճամբազյանի անվ. թիվ 79 հմ/դ	Հ. Հովհաննիսյան 30
84.	թիվ 81 մ/դ	Թահիրովի 14
85.	թիվ 87 մ/դ	Խուդյակովի 44
86.	թիվ 91 հմ/դ	Ծերենցի 72ա
87.	թիվ 97 ա/դ	Ներքին Շենգավիթ 12-րդ փող. 1
88.	թիվ 98 հմ/դ	Նորագավիթ 1-ին փող. 97
89.	Թումանյանի անվ. թիվ 32 հմ/դ	Սևանի 132
90.	Լ. Միրիջանյանի անվ. թիվ 155 հմ/դ	Բաշինջաղյան 2 նրբ.
91.	Լ.Արիսյանի անվ. թիվ 127 ա/դ	Պ. Սևակի 11
92.	Լ.Բելինսկու անվ. թիվ 38 հմ/դ	Գ. Նժդեհի 22
93.	Լ.Շանթի անվ. թիվ 4 հմ/դ	Ալեք Մանուկյան 3
94.	Լ.Տոլստոյի անվ. թիվ 128 հմ/դ	Ազատության 5
95.	Լիսիցիանի անվ. թիվ 34 հմ/դ	Տիգրան Մեծի 38
96.	Խ.Աբովյանի անվ. թիվ 84 հմ/դ	Քանաքեռ 14 փող. թիվ 1
97.	Խ.Աբովյանի ՀՊՄՀ-ի հենակետային վարժ. ա/դ	Ագաթանգեղոսի 7ա
98.	Խ.Սամուելյանի անվ. թիվ 47 հմ/դ	Սարի թաղ 5
99.	Խաչատուր Աբովյանի անվ. թիվ 2 հմ/դ	ք. Երևան, Ա. Իսահակյանի 30
100.	Կարեն Դեմիճյանի անվ. թիվ 139 ա/դ	Ն/Ն Ն Ստեփանյան 3
101.	Կոստան Զարյանի անվ. թիվ 117 հմ/դ	Ֆանարջյան 15
102.	կույրերի երեկոյան հտ/դ	Ն. Տիգրանյան 6
103.	Հ. Մորգենթաուի անվ. թիվ 126 հմ/դ	Էստոնական 8
104.	Հ.Ավետիսյանի անվ. թիվ 74 հմ/դ	Բագրատունյաց 23
105.	Հ.Հովհաննիսյանի անվ. թիվ 52 հմ/դ	Շիրակի 3
106.	Հ.Պարոնյանի անվ. թիվ 59 հմ/դ	Վարշավյան 45
107.	Հ.Սահյանի անվ. թիվ 70 հմ/դ	Սարի-թաղ 3-րդ փող., 44 շ.
108.	Հակոբ Կոջոյանի անվ. թիվ 15 կթհ.	Մաշտոցի 2ա և 11
109.	ՀՊՃՀ ա/դ	Տերյան 105, 7-րդ մասնաշենք
110.	Հրանտ Մաթևոսյանի անվ. 96 հմ/դ	Նոր-Նորք Դ. Մալյան -24
111.	Ղ.Աղայանի անվ. թիվ 63 հմ/դ	Կիևյան 9
112.	Ղևոնդ Ալիշանի անվ. թիվ 95 մ/դ	Նուբարաշեն 13 փող. 1 տուն
113.	Մ.Աբեղյանի անվ. ԵՐՃՇՊՀ ա/դ	Խանջյան 9
114.	Մ.Գալշոյանի անվան թիվ 148 ա/դ	Սունդուկյանի 78